ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր
իրավասության դատարանի վճռի դեմ
Նախագահող դատավոր Մ. Գևորգյան

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/1246/02/17

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը
(այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

նախագահությամբ Կ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ՀՈՒՆԱՆՅԱՆԻ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆԻ

Մասնակցությամբ՝
Հայցվորի ներկայացուցիչ՝ Սուսաննա Մխիթարյան
(անձնագիր AH0382253)

Պատասխանողի ներկ.՝ Գեղամ Բաղդասարյան
(անձնագիր AK0229327)

Անահիտ Սուվարյան
(անձնագիր AM0465521)

2017 թվականի սեպտեմբերի 12-ին

դռնբաց դատական նիստում քննելով Շիրակի մարզպետարանի կողմից բերված վերաքննիչ բողոքը ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) 30.05.2017 թվականի վճռի դեմ՝ քաղաքացիական գործով ըստ հայցի Վազգեն Հարությունյանի ընդդեմ Շիրակի մարզպետարանի՝ նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի պահանջի մասին

ՊԱՐԶԵՑ

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Վազգեն Հարությունյանը Դատարան ներկայացրած հայցադիմումով խնդրել է՝ վերականգնել իրեն իր նախկին աշխատանքում, որպես Շիրակի մարզպետի խորհրդական: Պատասխանողից հօգուտ իրեն բռնագանձել իր միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար (հայցվորը Դատարանին է ներկայացրել ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալի կողմից 29.03.2017 թվականին տրված թիվ 02.2/2360-17 գրությունը, որում նշված է, որ ՀՀ Շիրակի մարզպետի նախկին

խորհրդական Վազգեն Հարությունյանի միջին ամսական աշխատավարձը (01.02.2016թ.-01.02.2017թ. ընկած ժամանակահատվածում) կազմել է 370.971 ՀՀ դրամ):

Դատարանի 22.03.2017 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանը 30.05.2017 թվականին վճռել է. «Վազգեն Նիկոլայի Հարությունյանի հայցը բավարարել. Վազգեն Նիկոլայի Հարությունյանին վերականգնել իր նախկին աշխատանքում, որպես Շիրակի մարզպետի խորհրդական եւ Շիրակի մարզպետարանից հօգուտ Վազգեն Նիկոլայի Հարությունյանի 07.02.2017 թվականից բռնագանձել Վազգեն Նիկոլայի Հարությունյանի միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար (մինչեւ նրա աշխատանքում փաստացի վերականգնման օրը): Շիրակի մարզպետարանից հօգուտ Վազգեն Նիկոլայի Հարությունյանի բռնագանձել 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ, որպես փաստաբանի վարձատրության խելամիտ գումար: Պետական տուրքի հարցը համարել լուծված»:

Նշված վճռի դեմ Շիրակի մարզպետարանի կողմից 29.06.2017 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը դատական կազմին է հանձնվել 17.07.2017 թվականին:

Վերաքննիչ դատարանի 20.07.2017 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

Վազգեն Հարությունյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի պատասխանն **անստորագիր** է, հետևաբար հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքի պատասխանը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 212-րդ հոդվածի պահանջներին, Վերաքննիչ դատարանը բողոքի պատասխանը քննության առարկա չի դարձնում:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վերաքննիչ դատարանը ստորև շարադրում է վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները՝ Դատարանի նախընտրած հերթականությամբ և խմբավորմամբ:

Ըստ բողոքաբերի Դատարանը սխալ է մեկնաբանել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասը, կիրառել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ, 115-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր:

Բողոքի սույն հիմքերը բողոքաբերը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 4-րդ հոդվածի 1-ին, 6-րդ, 7-րդ 8-րդ մասերի վկայակոչմամբ և մեջբերմամբ բողոքաբերը նշել է, որ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի թիվ 179-Ա որոշման համաձայն՝ Ֆելիքս Ցոլակյանն ազատվել է ՀՀ Շիրակի մարզպետի պաշտոնից: ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 3-ի թիվ 194-Ա որոշման համաձայն՝ Հովսեփ Սիմոնյանը նշանակվել է ՀՀ Շիրակի մարզպետ: ՀՀ Շիրակի մարզպետի 2017 թվականի փետրվարի 06-ն արձակվել է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Վազգեն Հարությունյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» թիվ 8 կարգադրությունը:

Դատարանը վճիռ կայացնելիս սխալ է մեկնաբանել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասը, մասնավորապես Դատարանն արձանագրել է, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասը «Աշխատանքից ազատելու լիազորություն ունեցող անձի /սույն դեպքում գործատուի/ աշխատանքից

ազատմանն է վերաբերվում և ոչ թե՝ մարզպետի խորհրդականի...»: Մինչդեռ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի «մինչև այդ պաշտոնում նոր նշանակում կատարվելը» դրույթը միանշանակ վերաբերում է մարզպետի խորհրդականին, այլ ոչ թե մարզպետին:

Դատարանի նման եզրահանգումը չի բխում ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված հիմնարար սկզբունքներից մեկի՝ հայեցողական պաշտոնի հասկացությունից և հակասում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասին:

Դատարանը խորհրդականի հայեցողական պաշտոնը փաստորեն հավասարեցրել է քաղաքական պաշտոնին, քանի որ համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Քաղաքական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձը փոփոխվում է քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում»:

Դատարանը գտել է, որ Վ. Հարությունյանին աշխատանքից ազատելիս գործատուն պետք է ղեկավարվի ՀՀ աշխատանքային օրենսգրքի դրույթներով: Դատարանի նման դիրքորոշումը հակասում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներին :

Խնդրել է Վերաքննիչ դատարանին ամբողջությամբ բեկանել թիվ ԾԴ/1246/02/17 քաղաքացիական գործով Դատարանի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

3. Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

1) 01.10.2010 թվականին հայցվոր Վազգեն Նիկոլայի Հարությունյանի և Շիրակ մարզի մարզպետի միջև անորոշ ժամկետով կնքվել է աշխատանքային պայմանագիր:

2) ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի թիվ 179-Ա որոշման համաձայն՝ Ֆելիքս Ցոլակյանն ազատվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի պաշտոնից:

3) ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 3-ի թիվ 194-Ա որոշման համաձայն՝ Հովսեփ Սիմոնյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետ:

4) ՀՀ Շիրակի մարզպետի 2017 թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Վազգեն Հարությունյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» թիվ 8 կարգադրությունը, որի հիմքում դրվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, ՀՀ նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-728 հրամանի 1.7 կետը և ՀՀ կառավարության 19.09.2002 թվականին թիվ 1792-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Շիրակի մարզպետարանի կանոնադրության 17-րդ կետը:

5) 2017 թվականի փետրվարի 6-ին ՀՀ Շիրակի մարզպետի N 45-Ա կարգադրությամբ մարզպետի խորհրդականի պաշտոնում նշանակվել է Կառլեն Արրահամյանը:

6) ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 8-ի թիվ 610–Ա որոշման համաձայն՝ Հովսեփ Սիմոնյանն ազատվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի պաշտոնից:

7) ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 8-ի թիվ 611-Ա որոշման համաձայն՝ Արթուր Խաչատրյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետ:

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Նախքան վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալը՝ Վերաքննիչ դատարանը հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է հետևյալ մարմիններում հանրային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա. 13) Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերում:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական պաշտոններն են՝ քաղաքական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների պաշտոնների), հայեցողական (բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների, Երևանի, Գյումրու և տեղակալի, Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների օգնականների, Երևանի, Գյումրու և Վանաձորի գլխավոր ճարտարապետների օգնականների պաշտոնների), քաղաքացիական, ինչպես նաև պետական ծառայության պաշտոնները:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայեցողական պաշտոնը նշանակովի պաշտոն է, որն զբաղեցնող պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ընդունում է որոշումներ և համակարգում դրանց կատարումը: Հայեցողական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձը կարող է փոփոխվել քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության դեպքում:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայեցողական պաշտոններ են...Հայաստանի Հանրապետության մարզպետների և նրանց տեղակալների ...պաշտոնները:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված համապատասխան պաշտոնատար անձանց խորհրդականներին, մամուլի քարտուղարներին, օգնականներին և ռեֆերենտներին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի լիազորությունների դադարման դեպքում նրանք շարունակում են կատարել իրենց պարտականությունները մինչև այդ պաշտոնում նոր նշանակում կատարվելը:

ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.7-րդ կետի համաձայն՝ **մարզպետի խորհրդականին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է մարզպետը:**

Դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասը աշխատանքից ազատելու լիազորություն ունեցող անձի (սույն դեպքում գործատուի) **աշխատանքից ազատմանն է վերաբերվում և ոչ թե՝ մարզպետի խորհրդականի**, իսկ մյուս իրավական ակտերում ընդամենը ամրագրված է այն փաստը, որ մարզպետը հանդիսանում է գործատու և որպես գործատու իրավունք ունի հայցվորին ազատել աշխատանքից»:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Դատարանն իր այս եզրահանգումը կատարելիս սխալ է մեկնաբանել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասը, մասնավորապես «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի մեկնաբանությունից ուղղակի հետևում է, որ պաշտոնատար անձի լիազորությունների դադարման դեպքում, վերջիններիս խորհրդականները,.... շարունակում են կատարել իրենց պարտականությունները մինչև այդ պաշտոնում նոր նշանակում կատարվելը:

Քննարկվող դեպքում ըստ սույն գործի փաստերի՝ 01.10.2010 թվականին հայցվոր Վազգեն Նիկոլայի Հարությունյանի և Շիրակ մարզի մարզպետի միջև անորոշ ժամկետով կնքվել է աշխատանքային պայմանագիր: ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի թիվ 179-Ա որոշման համաձայն՝ Ֆելիքս Ցոլակյանն ազատվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի պաշտոնից:

ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 3-ի թիվ 194-Ա որոշման համաձայն՝ Հովսեփ Սիմոնյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետ:

ՀՀ Շիրակի մարզպետի **2017 թվականի փետրվարի 6-ի** «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական Վազգեն Հարությունյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին» թիվ 8 կարգադրությամբ Վ. Հարությունյանը 07.02.2017 թվականից ազատվել է ՀՀ Շիրակի մարզպետի խորհրդականի պաշտոնից, կարգադրության հիմքում դրվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, ՀՀ նախագահի 06.05.1997 թվականի թիվ ՆՀ-728 հրամանի 1.7 կետը և ՀՀ կառավարության 19.09.2002 թվականին թիվ 1792-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Շիրակի մարզպետարանի կանոնադրության 17-րդ կետը:

Վերոգրյալից ուղղակիորեն հետևում է, որ հայցվոր Վ. Հարությունյանի հետ աշխատանքային հարաբերությունները շարունակվել են մինչև ՀՀ Շիրակի մարզպետի խորհրդականի պաշտոնում նոր նշանակում կատարվելը, այն է՝ 2017 թվականի փետրվարի 6-ի ՀՀ Շիրակի մարզպետի N 45-Ա կարգադրությամբ մարզպետի խորհրդականի պաշտոնում նշանակվել է Կառլեն Աբրահամյանը: Այսինքն՝ հայցվորի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջների պահպանմամբ, հետևաբար Դատարանի եզրահանգումն իրավաչափ չէ: Նույն պատճառաբանություններով Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ և 115-րդ հոդվածները կիրառելի չէին, քանի որ հայցվորն աշխատանքից ազատվել է օրենքի ուժով:

Վերը շարադրվածն ակնհայտ է դարձնում Դատարանի կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 8-րդ մասը սխալ մեկնաբանելու, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ, 115-րդ հոդվածները կիրառելի չլինելու վերաբերյալ բողոք բերած անձի փաստարկների հիմնավորվածությունը, ինչն էլ իր հերթին թույլ է տալիս եզրակացնել, որ Դատարանի թույլ տված այդ խախտումներն հանգեցրել գործի

սխալ լուծման՝ հայցի բավարարման, ուստի դրանք բողոքարկված վճռի բեկանման հիմք են, միաժամանակ Վերաքննիչ դատարանը եզրակացրեց, որ նման պայմաններում բացակայում է գործի նոր քննության անհրաժեշտությունը, ուստի տվյալ դեպքում կիրառելի է դատական ակտը փոփոխելու Վերաքննիչ դատարանի լիազորությունը:

5. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, իսկ 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքաբերը նախապես վճարել է պետական տուրքը, իսկ հայցվորն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի ուժով ազատված է պետական տուրքի վճարումից Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ և 221-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Շիրակի մարզպետարանի վերաքննիչ բողոքը բավարարել: ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 30.05.2017 թվականի թիվ ՇԴ/1246/02/17 վճիռը բեկանել և փոփոխել: Վազգեն Հարությունյանի հայցն ընդդեմ ՀՀ Շիրակի մարզպետարանի՝ նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի պահանջի մասին՝ մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Կ. ՀԱԿՈԲՅԱՆ	ԴԱՏԱՎՈՐ Ա. ՀՈՒՆԱՅԱՆ	ԴԱՏԱՎՈՐ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտել «[illegible]» [illegible] 2017 թվականին

Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան